

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

բգթ,

Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ՋԻԴԻ ՄԱԶԻԱՅԻ ԶԱՓԱԶԱՆՑ ՀԱՐԱԶԱՏ ՁԱՅՆԸ*

Բանալի բառեր – ձայն, ծես, երգ, տարածություն, հող, բառ, հայրենիք, աղոթք, մահ, փրկություն, վերադարձ:

Բանաստեղծության մի տեսակ կա, որ կարծես թե ծես է՝ բառի նկատմամբ գրողի սրբազան երկյուղածությամբ: Հենց այս հավատամքով է առաջնորդվում չին բանաստեղծ Ջիդի Մաջիան իր **«Իմ ձայնը»** գրքում (Երևան, Արմավ, 2017): Գրքի թարգմանիչը բանաստեղծ Գագիկ Դավթյանն է, որ ռուսերեն տողացիները համադրել է բնագրի հետ՝ չինարենի մասնագետի օգնությամբ: Արդյունքում ստացվել է բանաստեղծական մի հրաշալի գիրք, որն առինքնող է թե՛ մտածական-խոհական հարուստ շերտերով և թե՛ հուզական-զգայական պրկվածությամբ:

2017 թվականին Ջիդի Մաջիա բանաստեղծը հայ ընթերցողին ներկայանում է միանգամից երկու գրքով²: Մինչ այդ հայ ընթերցողը առիթ է ունեցել ծանոթանալու չին գրողին **«Հրեղեն խոսքեր»** (Ստեփանակերտ, Ոգի Նաիրի, 2015) ժողովածուով: Սակայն մենք անդրադառնանք **«Իմ ձայնը»** ժողովածուին:

Ջիդի Մաջիայի բանաստեղծությունները խորքային զարգացում ունեն անկեղծ ապրումների հենքով և ուղղահայաց-տարածական գեղարվեստական ընդգրկումներ են ի հայտ բերում խոհական հարուստ ենթաշերտերով: Սա վկայում է նաև գրքի թարգմանիչ Գագիկ Դավթյանը, գրքի առաջաբանում նշելով, որ նրա բանաստեղծություններն աչքի

1 Ընդունվել է տպագրության 10.06.2022 թ.:

2 Տե՛ս, Ջիդի Մաջիա, Ընծայությունից մինչև Մայակովսկի, Ստեփանակերտ, Ոգի Նաիրի, 2017:

են ընկնում «աշխարհընկալման ու ներընկալման խորությամբ, մտքի թռիչքներով, շռայլ պատկերավորությամբ ու անակնկալ ընդհանրացումներով, տպավորիչ փոխաբերություններով ու համեմատություններով, տողի տարողունակությամբ ու փիլիսոփայական հագեցածությամբ»¹:

Լիտվացի բանաստեղծ Թոմաս Վենցյովան Ջիդի Մաջիայի պոեզիայում կարևորում է հինավուրց լեզվի վերածնունդը, բնության նկատմամբ հարգանքը, նախորդ սերունդների հիշողության ներկայությունը տեքստում, բռնության բացասումը և այլն (էջ 9):

Չին բանաստեղծ Լյու Յանը այս ժողովածուն կարևորում է ազգի հնագույն պատմության և ժողովրդական բանահյուսության հարուստ շերտերի պարունակման տեսանկյունից (էջ 10):

Իսկ ռուս հայտնի բանաստեղծ, թարգմանիչ Եվգենի Եվտուշենկոն չին բանաստեղծին տալիս է բարձրագույն գնահատականը՝ «Նա յուրատեսակ չինական Ուլյո Ուիթմեն է» (էջ 11):

Սրանք կարևոր վկայություններ են, որոնք փաստում են, որ գործ ունենք բացառիկ օժտվածության տեր մի բանաստեղծի հետ, ում բնագիրը տարակերպ վերլուծությունների հնարավորություն է տալիս:

«Ի ժողովրդի երգեր» վերտառությամբ շարքում բանաստեղծը պատկերում է երկրի նկատմամբ սերը, իր ժողովրդի կենսախոհի ու իր ես-ի ներքին հարաբերումները, և կյանքը դառնում է ցիկլային շարունակականություն: Այն, ինչ տեղի է ունենում, սկսվել է երեկ և շարունակվելու է վաղը: Այս ամբողջականությունը հասկանալու համար մարդ պետք է հաճախ իրեն կողքից նայի.

*Պարզ երկնքի մեջ խավարեց հանկարծ արևը,
և ես վտանգ զգալով,
ինձ տեսա կողքից՝ ինչպես ուրիշի:*

Ուրիշ ճանապարհ (էջ 16)

Ու նվիրական է դառնում մարդը՝ քանզի նա միայնակ չէ, արծվից սերված ժողովրդի ժառանգականության կրողն է, ամբողջական շղթայի մի օղակը, ուստի հաճախ ժամանակային ներկա-անցյալ-ապագա շղթայակարգը դադարում է գոյություն ունենալ հավերժական ճերմակ տարածության մեջ.

¹ Ջիդի Մաջիա, «Իմ ծայրը», Երևան, Արմավ, 2017, էջ 8: Այսուհետ սույն գրքից մեջբերումների միայն էջերը կնշվեն տեքստում:

*Տարօրինակն այն է, որ անցյալը
կորցնում է պատկերն իր իրական,
չէ որ ինձ ասել են՝ արծիվը մեր հայրն է,
և այն ճանապարհը,
որով ընթացել են նախնիները,
սպիտակ ճանապարհ է:*

Անտեսանելի ալիքները (Էջ 24)

Ջիդի Մաջիան իր հայրենիքի նվիրյալն է, անքակտելի սրբազան կապով կապված հայրենի հողի հետ: Նա երկիր-հայրենիք գիտակցության այն բարձրագույն կետին է հասել, որ ոչինչ պետք չէ պահանջել հայրենիքից, ավելին, դու պետք է տաս, նվիրվես, լինես, ծառայես հայրենիքին և դրա համար ոչ մի պատճառ պետք չէ: Սա նվիրումի բարձրագույն ու հոգևոր ընկալումն է, որ ավանդում է բանաստեղծը նաև հայ ընթերցողին.

*Ես սիրում եմ իմ հողը,
նաև նրա համար, որ այն պարզապես ի՛մ հողն է:
Ինչպես էլ որ մենք փառաբանենք այն,
նա լռում է քարի նման...*

Հայրենի հող (Էջ 20-21)

Ջիդի Մաջիան իր կենսափորձն ու հուշապրումներն է բանաստեղծում: Կյանքի ճանաչողությունները բանաստեղծը ներկայացնում է բնության հետ մարդու ներդաշնակ համակցությամբ: Եվ իր ձայնն է լսում կողքից՝ ինչպես մի մանտրա, հանց մի աղոթք, որն արձագանքում է ժամանակի միջով՝ թե՛ անցյալ ուղղությամբ և թե՛ ապագա.

*Քնքշանվաղ աչքերի մեջ ես լսեցի,
թե ինչպես է մթնշաղը բացում դռներն անտառային,
ամպրոպների խուլ դղրոյունը լեռներում,
վառվող փայտի ճարճատյունը օջախի մեջ,
երբ զգացի համբույրները նրա խոնավ:*

Բուստո անունով աղջիկը (Էջ 32)

«**Բառի ուղեկցորդը**» խորագիրը կրող բաժնում փոխվում է բանաս-

տեղծական շարժումը: Շեշտադրվում է բետոնե ու պողպատե միտքն ու խոհը, բանաստեղծությունը դառնում է իմաստային առումով առաձգական և հնարավորություն տալիս տարակերպ ընկալումների: Բանաստեղծությունները մշակութային խաչաձևումներ են ստանում, առկա են հոլումներ մայաների և հին պերուական քաղաքակրթության հետ: Այստեղ կարևոր մի հանգամանք. խոսքս բանաստեղծական դիտակետի մասին է: Ջիդի Մաջիայի հայացքը կյանքին և աշխարհին փոխում է իր դիրքը: Բանաստեղծը վեր է կանգնում առօրեականությունից և աշխարհն ու այնտեղ տեղի ունեցող երևույթները դիտում է վերից:

*Աչքերի մեջ աշխան ինչ-որ ոգի կա մի
թեթև հարբած, որ թափառում, տերևներ է տանում իր հետ,
և պարանով տերևահյուս ելնում է վեր,
մեռության մեջ լսելու, թե
ոնց է աշխարհն ամայանում:*

Աշխան աչքերը (Էջ 46)

Եվ բանաստեղծը պատրաստ է ինքնագոհաբերման, քանզի իբրև բաց կյարդ՝ նա ոչ միայն առաջինն է զգում ցավը, այլև այն զգում է անտանելիորեն ուժգին. Ուստի՝ «*Թող որ, վերջապես, գլուխս սեղմի // պսակը փշե: // Ցավ, դու պետք ես ինձ, // և իմ սեփական ընտրությունն է դա*» (**Երգ ցավի պատվին** (Էջ 47)): Նա պատրաստ է ամենքիս ցավը տեղափոխել իր վրա, քանզի հավատում է կյանքի ու մարդկության հարատևությանը. «*Չէ՞ որ մարդը իր վերջնուղին չունի*»: (**Աշխարհի ծայրին** (Էջ 49)):

Գրքում ներառված է նաև «**Ձոներ և ընծաներ**» շարքը, որտեղ Ջիդի Մաջիան իր խոնարհումն է բերում մարդկության երախտավորների առջև. Նելսոն Մանդելան, Ռոբերտ Ֆրոստը, իսրայելցի բանաստեղծ Իյեխուդա Ամիխայը, Պաբլո Ներուդան, Գաբրիելա Միստրալը, Սեսար Վալյեխոն և ուրիշ համաշխարհային պոետներ դառնում են բանաստեղծին հոգևոր ազդակներ տվողները: Ստեղծվում են ինստիտուցիոնալ պոեզիայի դասական նմուշներ և հաճախ վերոնշյալ բանաստեղծների տողերն ու խոհերը արտացոլվում են Ջիդի Մաջիայի տողերում:

*Սև քարեր են դրված սպիտակ տապանաքարին:
Երբ դու գրում էիր այս տողերը,
պարզապես շփոթել էիր քո թաղման վայրը:*

Սեսար Վալյեխոյի գերեզմանը (Էջ 65)

Հաջորդ՝ «**Ձևե հովագից Մայակովսկուն**» շարքն ասես առանձին գիրք լինի գրքում: Շարքը՝ հոգևոր երկխոսություն և տեքստային յուրօրինակ փոխկանչ է ռուս մեծ բանաստեղծի ու նրա պոեզիայի հետ: Սրանք Ջիդի Մաջիայի հոգու և հավատի բանաստեղծություններն են: Ինչպես Մայակովսկին, այնպես էլ չին բանաստեղծը արտաքին աշխարհի առօրյա երևույթների մեջ փնտրում է իր ներքին տեսիլների համարժեքը.

*Կարելի է հավատալ սեփական մատներին,
Բայց միշտ հիշել է պետք,
Որ կարող է ձեռքդ դավաճանել:
Չէ որ փայտե գդալը նա
Միշտ չէ, որ իր տիրոջ կողմն է տանում:
Իսկ հակառակ կողմում հանված մատնահետքից
Մնում է լույս ամբողջական և ավարտուն դատարկություն:*
Շարժվող խաղանիշ (Էջ 76)

Մարդ արարածի հոգու խորքային եությունը շարունակում է մնալ չբացահայտված և բանաստեղծը միայն իր զգայություններով կարող է սահմանել անսահմանելին: Ջիդի Մաջիան այս հավատո հանգանակն է կրում: Բայց ինչպես Մայակովսկին, այնպես էլ Մաջիան ապավինում է իր ձայնին, դրա լսելիությանը, որը երբեմն դառնում է խրոխտ, երբեմն շշուկ, բայց լսելի.

*Կմախքների ստվերները հաճախակի
Մեր անցյալի
Թույլ հետքերն են ջնջում կավե հին պատերից:
Շրթհարմունն իմ բրոնզագույն ինձ այլևս չի հմայում,
Որովհետև երկրորդ կեսը իմ եության
Օտարության մեջ մեռել է վաղուց արդեն:*
Մի՞թե ես կարող եմ ես չդառնալ այստեղ (Էջ 80)

Բանաստեղծություններն այս բաժնում ավելի երկարաշունչ են, իսկ տողերը՝ հագեցած: Բանաստեղծը կարծես ընկնում է չհանդարտվող հեքի մեջ, և ինչպես մոլորակն է գլխապառույտ իր ստվերի ետևից պտտվում, այնպես էլ բանաստեղծն է որոնում յուրաքանչյուր մարդու մեջ իր ես-ը, իր մեջ՝ բոլորին.

Քո քաղցը դա քաղցն է ամբողջ մեր աշխարհի,
 Նա չի զատում մարդկանց
 Ըստ ազգությունների և ցեղերի:
 Նա անցնում է բոլոր պետական սահմանները:
 Քո քաղցը նշանակում է սովամահություն:
 Քաղցից մինչև անգամ երկաթե գդալն է խելագարվում:
 Դա այն քաղցն է, որով մենք տանջում ենք իրեն:

Յոժեֆ Աթթիլային (Էջ 84)

Մահվան առեղծվածն ու անխուսափելիությունը միշտ բանաստեղծների ուշադրության կենտրոնում է եղել: Միայն հիշենք Չարենցի մահվան տեսիլները: Ջիդի Մաջիան ևս իր մահվան տեսլականն է ունենում: Գլուխգործոց է ահա «Երբ ես մեռնեմ...» բանաստեղծությունը: Բանաստեղծի համար մահը ավարտը չէ, այլ նորի սկիզբը.

Երբ մամինն իմ դնեն խարույկին,
 Իմ հոգին կսկսի իր ուղին:
 Ինձ համար լոկ այնտեղ
 Մահը նոր ծննդի սկիզբը կդառնա:
 Մոխիրը դեռ երկար կծխա,
 Եվ սակայն մշուշոտ, անորոշ իմ ճամփին
 Ստվերս չի կանգնի ոչ մի պահ,
 Կընթանա նա վստահ այն ճամփով,
 Որ տոհմիս նախնիներն են բացել:

Երբ ես մեռնեմ... (Էջ 90-91)

Նման կերպ արագ հաղթահարվում է մահվան սարսափը, և կյանքը դառնում է դեպի փրկություն տանող ուղի, քանզի մեր նորոթյա դժվար ու հակասական իրականության մեջ համատարած ստիգ, վայրագություններից ու կեղծիքից հալածված մարդը փրկության ուրիշ ելք չգտնելով՝ իր հույսը կապում է հոգևոր կեցության հետ: Այստեղ ևս առկա է ինտելեկտուալ հղումը, մասնավորապես՝ Պլատոնին, ով իր «Ֆեդոն» և «Հոգու անմահության մասին» աշխատություններում առաջ է քաշում այն թեզը, թե հոգիները գոյություն ունեն առանց մարմնի և օժտված են բանականությամբ: Բանաստեղծ Արմեն Մարտիրոսյանի առիթով գրականագետ Սուրեն Աբրահամյանը նշում է. «Բանաստեղծը անցել

Էր...այսաշխարհային սահմանը, հատել բնագանցական աշխարհի գիծը, խոսում էր երկու աշխարհների՝ կյանքի և մահվան միասնության ոլորտից, ուստի բանաստեղծի դրաման ընկալվում է խորունկ, հոռետեսական գույներով, ունենալով նաև ասելիքի հարուստ ենթատեքստ»¹: Նույնը կարելի է ձևակերպել նաև Ջիդի Մաջիայի առիթով:

Ուշագրավ են Ջիդի Մաջիայի պոեմները: Դրանք անմիջական շարունակությունն են նախորդ շարքի, կամ ավելի շուտ՝ դրանից ածանցվող մտքերի հոսքեր: «**Ձնե հովազ եմ ես**» պոեմը տիբեթյան բարձրավանդակի խորհուրդն ունի: Բանաստեղծն իրեն նույնացնելով իրբիսին²՝ հղում է կատարում հոգևոր ու հավատավոր մարդու տեսակի անհետացմանը: Եվ ինչպես իրբիսին, այնպես էլ հոգևոր ազդակներով սնուցվող բանաստեղծներին կարելի է ներառել կարմիր գրքում: Այնուամենայնիվ Ջիդի Մաջիան վստահ է իր հոգու և հավատի ուժին և գիտի, որ հաղթելու է:

Ես սուրահների նախերգանքը չեմ,

Ձայնն եմ լեռների,

Որ ժամանակի քար լռությանն է

Մատնում պարտության:

Ձնե հովազ եմ ես... (Էջ 113)

Կարդալով Ջիդի Մաջիայի այս հոգեպարար պոեմը՝ հանդիպում ենք բուդդիզմի անմահ հոգու և ճերմակ ու անբիծ փիլիսոփայության տարաբնույթ ածանցումների, որոնց մեկնությունները դյուրին չեն: Դրանք մեծ մասամբ գրված են սիմվոլիստական և միֆական պոեզիայի օրենքներով՝ շեշտը հիմնականում դնելով բառի տարակերպ նշանա-

1 Աբրահամյան Սուրեն, Արդի պոեզիայի գեղարվեստական համակարգը, Երևան, Արմավ հրատարակչություն, 2020, էջ 18:

2 Իրբիս, կամ ձյունահովազ, կամ ձյունաընձառյուծ[1] (լատ.՝ *Uncia uncia*, ըստ այլ դասակարգման — *Panthera uncia*), կատվազգիների ընտանիքի խոշոր գիշատիչ կաթնասուն է, որը բնակվում է Կենտրոնական Ասիայի լեռնազանգվածներում: Իրբիսն աչքի է ընկնում բարակ, երկար, ճկուն մարմնով, համեմատաբար կարճ թաթերով, ոչ մեծ գլխով և շատ երկար պոչով: Պոչի հետ հասնելով 200-230 սմ երկարության, կշռում է ընդամենը 55 կգ: Մորթին բաց մոխրա-ծխագույն է՝ օղակաձև և համատարած մուգ բծերով: Բնակության դժվարիասանելիության և տեսակի ցածր խտության պատճառով, նրա շատ անատոմիական հատկանիշներ դեռ լավ չեն ուսումնասիրվել: Ներկա պահին իրբիսների քանակը շատ քիչ է, 20-րդ դարում այն գրանցվել է IUCN Կարմիր գրքում, ինչպես նաև այլ երկրների պաշտպանական փաստաթղթերում: 2015 թվականի դրությամբ իրբիսների որսը արգելված է:

կույթունների և դրանում առկա հոգևոր զորության, ինչպես նաև նրա առեղծվածային ձգողականության վրա: Բանաստեղծն ինչ-որ տեղ մեկուսանում է աշխարհից՝ «Այս Հողագնդում, // Որ խաբեությամբ, քծնանքով է լի և սպանությամբ, // Չկա ոչ մի վայր, // Մի թիզ հող, որին ես պատկանեի:» (**Ձևե հովազ եմ ես...** (Էջ 115-116)), իրեն հանձնում մահվան՝ այս դեպքում հավերժության գիրկը՝ «Երեկ երազում մայրիկիս տեսա: // Նա վաղուց այնտեղ սպասում է ինձ, // Անափ տխրությամբ լեցուն աչքերով» (**Ձևե հովազ եմ ես...** (Էջ 121-122)), սակայն հավատում է ճակատագրով իրեն բաժին ընկած դերին, որով էլ հաղթահարվում է կյանքի ունայնությունն ու իմաստավորվում մարդկային գոյը:

*Իսկ երբ արթնանամ
Իմ նախնիների բյուրհագարամյա հիշողությունից,
Եվ աստվածության սրբազան խոսքերն ականջիս հասնեն,
Ապա կարող եմ, շուրթերիս առած, ներկային հանձնել
Այն ավանդները, որ փոխանցվել են հայրերից որդվոց:
Դրանք կարող են
Դառնալ լավագույն զենքերը ուժի իշխանության դեմ:*
Ձևե հովազ եմ ես... (Էջ 132)

«Քեզ, Մայակովսկի» պոեմն անմիջապես ասոցացվում է Պարույր Սևակի «Аllo Մայակովսկի» անավարտ պոեմի հետ: Այստեղ էլ Ջիդի Մաջիան է զրուցում Մայակովսկու հետ՝ ձեռք մեկնում նրան վերադարձի, շիկացած խոսքով պատմում աշխարհի այսօրվա ցավի մասին և ի վերջո իր գնահատանքը տալիս ի՛ր Մայակովսկուն:

*Իմ Մայակովսկի, նկարիչ ես դու, որ լուսաբացի
Կարմիր գույնով ես ներկել երկնքի պաստառը կապույտ:
Կող ես սանդուղքի՝ երկնքին միտված,
Երկրաչափություն, մտքի խորքերը հստակ ցուցանող,
Մարմնակմախք ես թվագազանի, խաղ ես կայծակի՝
Կենսաբանության հիմքերն ավերող:*
Քեզ, Մայակովսկի (Էջ 141)

«Անմահության մեջ անցածը» ևս պոեմ է և միևնույն ժամանակ առանձին բանաստեղծությունների-իմաստությունների հավաքածու: Արևելյան իմաստունների խորհուրդներն ասես հավաքված լինեն մեկ-

տեղ: Աֆորիստիկ հատվածներով այս պոեմի ամբողջական առանցքը բանաստեղծի ես-ն է.

Երկինք ու երկիր
Իրարից զատող տարածության մեջ
Ես նմանվում եմ փոքրիկ մի կետի:
Սակայն երկնքի փուլզման պահին
Նայում երկնքին ու տեսնում եմ, թե
Դատարկության մեջ
Նոր կյանքի նշանն ինչպես է ծնվում:

Ամմահության մեջ անցածը (էջ 163)

Արևելքն իր գույնով, բույրով, սովորույթով, իր պատմությամբ ու ապագային նետած մարտահրավերներով չինական աշխարհում առավելապես շոշափելի ու տեսանելի է: Այսօր փաստ է՝ Չինաստանը աշխարհի ուժեղագույն պետություններից է և դրանում մեծ է չինական մշակույթի դերը: Եվ քանի որ բոլոր արվեստների հիմքում ընկած է բանը, ուստի պետք է փաստել, որ այսօրվա պատմությունը գրվել է երեկ, քանզի գրականությամբ է պայմանավորված վաղվա օրը: Չին ժողովուրդը կարող է իր ապագայի համար ևս վստահ լինել, քանզի այսօր Ի ժողովրդի ծոցից ելած Ջիդի Մաջիան արարում է վաղվա պատմությունը:

Ծննդավայրի նկատմամբ ունեցած սրբազան երկյուղածությունը թե՛ լավագույն ավանդույթներին հավատարիմ մնալ է նշանակում և թե՛ բազմադարյա հիշողության պահպանման հնարավորություն: Տաք ու մեղրահամ մայրամուտով Ջիլեբուտեն, որ մի արահետով է կապված մեծ աշխարհի հետ, այն դրախտավայրն է, որին անընդհատ ձգտում է բանաստեղծը:

Այսպիսով, պետք է փաստել, որ Ջիդի Մաջիայի «Իմ ձայնը» ժողովածուն իր Նորարարական շնչով, ավանդույթներին հավատարմությամբ, ինտելեկտուալ հարուստ շերտերով ազատ երկխոսում է հայ ընթերցողի հետ և դառնում չափազանց հարազատ ձայն ոչ միայն հայ, այլև՝ համաշխարհային լավագույն պոեզիայի համապատկերում:

ARMEN AVANESYAN - JIDI MAJIA'S EXTREMELY DEAR VOICE - There is a kind of poetry that seems like a ritual, with the writer's sacred reverence for the word. It is this faith that guides the Chinese poet Jidi Majia in his book **'My Voice'** (Yerevan,

Armav, 2017). The translator of the book is the poet Gagik Davtyan.

Jidi Majia's poems have a deep development, based on sincere feelings, and vertical-spatial artistic inclusions appear with rich thoughtful substrata.

In the series entitled **'The Yi Nationality'**, the poet depicts the love for the country, the inner relationship between the thinker about the life of his people and his self, and life becomes a cyclical continuity. What is happening, started yesterday and will continue tomorrow. To understand this wholeness, one must often look at oneself from the side.

A person becomes gifted because he is not alone, he is the bearer of the heritage of the people descended from the eagle, a link in a complete chain, so often the temporal present-past-future chain system ceases to exist in the eternal white space.

Jidi Majia is a devotee of his homeland, bound by an inseparable sacred bond with his native land. He has reached the highest point of the country-motherland consciousness: you do not need to demand anything from the motherland, moreover, you have to give, dedicate yourself, be, and serve the motherland and no reason is needed for that. This is the highest and most spiritual perception of dedication, which the poet also conveys to the Armenian reader.

Jidi Majia writes down his life experience and memoirs as a poet. He presents the cognitions of life with the harmonious combination of man and nature. And he hears his voice from the side, like a mantra, a prayer that echoes through time, both in the past and in the future.

In the section entitled **'The Companion of the Word'**, the poetic movement changes. The concrete and steel mind and thought are emphasised, and the poem becomes semantically elastic and enables different perceptions. The poems take on cultural crossovers, with references to the Mayans and ancient Peruvian civilisation. Here is an important circumstance: this is about the poetic point of view. Jidi Majia's outlook on the life and world is repositioned. The poet rises above every day and observes the world and the phenomena happening there from above.

The deep nature of the soul of a human being remains undiscovered and the poet can only define the infinite with his senses. Jidi Majia carries this faith. But like Mayakovsky, Majia relies on his voice, its audibility, which is sometimes brash, sometimes whispery, but audible.

The mystery and inevitability of death have always been the focus of attention of poets. Let us just remember Charents' vision of death. Jidi Majia also has visions of his own death. The poem 'When I die...' is a masterpiece. For a poet, death is not the end but the beginning of something new.

The fear of death is quickly overcome, and life becomes a path to salvation, because in our modern difficult and contradictory reality, a person persecuted by widespread lies, atrocities and falsehood, finding no other way of salvation, connects his hope with spiritual existence.

Remarkable are the poems of Jidi Majia. They are a direct continuation of the previous series, or rather, streams of thoughts derived from it. The poem 'A snow leopard, I am' has the message of the Tibetan Plateau. By identifying himself with the snow leopard, the poet refers to the disappearance of the type of spiritual and religious person. And both the leopard and poets fuelled by spiritual impulses can be included in the Red Book. However, Jidi Majia is confident in the strength of his soul and faith and knows that he will win.

The poem **'To You, Mayakovsky'** is immediately associated with Paruyr Sevak's unfinished poem 'Allo Mayakovsky'. Here too, Jidi Majia talks to Mayakovsky, reaches out to him to come back, speaks passionately about today's pain in the world and finally gives his appreciation to his Mayakovsky.

'The Passed into Immortality' is also a poem and at the same time a collection of separate poems-wisdoms. The message of the Eastern sages seems to be gathered together. The whole focus of this poem with aphoristic verses is the poet's self.

Thus, it must be stated that Jidi Majia's collection **'My Voice'** with its innovative breath, loyalty to traditions, and rich intellectual layers freely speaks to the Armenian reader and becomes an extremely dear voice not only in the context of Armenian but also in the world's best poetry.

Key words - voice, ritual, song, space, land, word, homeland, prayer, death, salvation, return.

АРМЕН АВАНЕСЯН - СЛИШКОМ РОДНОЙ ГОЛОС ДЖИДИ МАДЖИИ - Есть такая поэзия, которая кажется ритуальной, со священным благоговением писателя перед словом. Именно этой верой руководствуется китайский поэт Джиди Маджия в своей книге «Мой голос» (Ереван, Армав, 2017). Переводчиком книги является поэт Гагик Давтян.

Стихотворения Джиди Маджии имеют глубокое развитие, основанное на искренних чувствах, а вертикально-пространственные художественные включения выступают с богато продуманными слоями.

В сборнике **«Народ И»** поэт отображает любовь к стране, внутреннюю связь мыслителя о жизни своего народа и самого себя, и жизнь становится

циклической непрерывностью. То, что происходит, началось вчера и продолжится завтра. Чтобы понять эту целостность, нужно часто смотреть на себя со стороны.

Человек становится одаренным, потому что он не одинок, он - носитель наследия народа, произошедшего от орла, он является звеном целостной цепи, поэтому часто временная система цепи настоящее-прошлое-будущее перестает существовать в вечной белизне пространства.

Джиди Маджия предан своей родине, он связан неразрывной священной связью с родной землей. Он достиг высшей точки сознания страны-родины: от Родины не нужно ничего требовать, более того, надо отдавать, посвящать себя, быть и служить Родине, и для этого не нужно никаких оснований. Это высшее духовное восприятие посвящения, которое поэт также доносит до армянского читателя.

Джиди Маджия записывает свой жизненный опыт и воспоминания как поэт. Он представляет познания жизни в гармоничном сочетании человека и природы. И он слышит свой голос со стороны, словно мантру, молитву, которая эхом отдается во времени, как в прошлом, так и в будущем.

В разделе **«Спутник слова»** меняется поэтическое течение. Акцент делается на конкретный и стальной разум и мысль, и стихотворения становятся семантически эластичными и допускают различные восприятия. Стихи пересекаются культурами со ссылками на майя и древнюю перуанскую цивилизацию. Здесь важное обстоятельство: речь идет о поэтической точке зрения. Изменен взгляд Джиди Маджии на жизнь и мир. Поэт возвышается над каждым днем и наблюдает сверху за миром и происходящими там явлениями.

Глубинная природа души человека остается нераскрытой, и поэт может определить бесконечное только своими чувствами. Джиди Маджия несет в себе эту веру. Но, как и Маяковский, Маджия полагается на свой голос, на его слышимость, иногда дерзкую, иногда шепотную, но слышную.

Тайна и неизбежность смерти всегда были в центре внимания поэтов. Вспомним только чаренцовское видение смерти. У Джиди Маджии также есть видения собственной смерти. Стихотворение «Когда я умру...» — шедевр. Для поэта смерть не конец, а начало чего-то нового.

Страх смерти быстро преодолевается, и жизнь становится путем к спасению, потому что в нашей современной непростой и противоречивой действительности человек, преследуемый широко распространенной ложью, злодеяниями и фальшью, не находя иного пути спасения, связывает свою надежду с духовным существованием.

Замечательны стихи Джиди Маджии. Они являются прямым продолжением предыдущей серии, вернее, производными от нее потоками мыслей. В стихотворении **«Я есть снежный барс»** есть послание Тибетского нагорья. Отождествляя себя со снежным барсом, поэт указывает на исчезновение типа духовного и религиозного человека. И в Красную книгу можно занести и барса, и подпитываемых душевными порывами поэтов. Однако Джиди Маджия уверен в силе своей души и веры и знает, что победит.

Поэма **«Тебе, Маяковский»** сразу ассоциируется с неоконченной поэмой Паруйра Севака «Алло Маяковский». Здесь также Джиди Маджия разговаривает с Маяковским, тянется к нему, чтобы попросить его вернуться, страстно говорит о сегодняшней боли в мире и, наконец, выражает признательность своему Маяковскому.

«Ушедший в бессмертие» — тоже поэма и в то же время сборник отдельных стихов-мудростей. Послания восточных мудрецов, кажется, собраны здесь воедино. В центре внимания этой поэмы с афористическими стихами находится личность поэта.

Таким образом, необходимо констатировать, что сборник Джиди Маджии **«Мой голос»** с его новаторским дыханием, верностью традициям и богатым интеллектуальным пластом свободно общается с армянским читателем и становится слишком родным голосом не только в контексте армянской, но и лучшей в мире поэзии.

Ключевые слова - голос, обряд, песня, пространство, земля, слово, родина, молитва, смерть, спасение, возвращение.

DOI: 10.54503/1829-0116-2022.1-248